

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

ԿՈՄՅՈՒՆԻԿԵ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Վիեննա, 30 մարտի (ՏԱՍՍ).— *Մարտի 28—30-ին Վիեննայում կայացավ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի նիստը։ Բյուրոն ընդունեց հետևյալ փաստաթղթերը.*

1. Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի բանաձևը։

2. Դիմում Եվրոպայի ժողովուրդներին։

3. Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի դեկլարացիան ատոմային զենքի մասին։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Վիեննա, 30 մարտի (ՏԱՍՍ).— *Վիեննայում, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի նիստում ընդունվել է Եվրոպայի ժողովուրդներին ուղղված հետևյալ դիմումը.*

Բեռլինի խորհրդակցությունն ապացուցեց, որ «եվրոպական պաշտպանական միավորումը» ժողովուրդներին պարտադրելու ցանկությունը գլխավոր խոչընդոտն է եվրոպական պրոբլեմների խաղաղ լուծման ճանապարհին։

«Եվրոպական պաշտպանական միավորումը» նշանակում է այնպիսի Եվրոպա, որը դատապարտված է բաժանվելու երկու թշնամական լագերի և շարունակելու սպառազինությունների ուժեղացման կուրսը։

«Եվրոպական պաշտպանական միավորումը» գերմանական միլիտարիզմի վերածնումն է Եվրոպայի կենտրոնում։

«Եվրոպական պաշտպանական միավորումը» մահացու սպառնալիք է Եվրոպայի յուրաքանչյուր բնակչի համար։ Դա ամեն մի օջախի ավերման սպառնալիք է։

Եվրոպայի ժողովուրդները, որոնք սեփական փորձով զգացել են Եվրոպայում տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմների պատճառած սոսկալի տառապանքները, պետք է համակված լինեն աշխարհում խաղաղության պահպանման համար ընդհանուր պատասխանատվության զգացմունքով։

Ճիշտ չէ, թե Եվրոպայի ժողովուրդներն ունեն միայն մեկ ճանապարհ՝ պառակտման և պատերազմի ճանապարհը։ Նրանց առջև բաց է մեկ ուրիշ ճանապարհ՝ Եվրոպայի բոլոր պետությունների միջև կոլեկտիվ անվտանգության կազմակերպելու ճանապարհը, առանց որևէ առանձին երկրի գերիշխանության, ազգային անկախությունը հարգելու ոգով և նրանց սեփական ձգտումներին համապատասխան, սպառազինությունների ընդհանուր կրճատման ոգով։

Չնայած քաղաքական ու սոցիալական տարբեր ռեժիմներին, Եվրոպայի բոլոր պետություններն ունեն ընդհանուր շահեր՝ խաղաղության պահպանումը այդ երկրներից յուրաքանչյուրի համար և տնտեսական ու կուլտուրական համագործակցության զարգացումը։ Եվրոպայում յուրաքանչյուր տղամարդու, յուրաքանչյուր կնոջ պարտքը այսօր պարզ է՝ պարտության մատնել «եվրոպական պաշտպանական միավորումը» և պատերազմը, ապահովել խաղաղությունը Եվրոպայում։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Վիեննա, 1 ապրիլի (ՏԱՍՍ).— *Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի Վիեննայի նիստում հետևյալ դեկլարացիան է ընդունվել ատոմային զենքի մասին.*

Զրաժնային ռումբի պայթյունը Բիկինիում, նրա սարսափելի ներգործությունը մարդկանց վրա, նրա գործողության շառավիղի երկարությունը վերահսկելու անհնարինությունը, նրա օգտագործման սպառնալիքը զայրույթ առաջ բերեցին ամբողջ աշխարհում։

Ատոմային զենքի արգելումը, որ պահանջվում է Ստոկհոլմի կոչով, մի բան, որը պաշտպանեցին հարյուր միլիոնավոր մարդիկ, այսօր դարձել է բոլոր ժողովուրդների պահանջը։

Գիտությունը անսահմանափակ ուժեր է ազատել ոչ թե նրա համար, որպեսզի ոչնչացնի մարդուն, ոչ թե նրա համար, որպեսզի մի ակնթարթում ոչնչացնի նրա հազարամյա աշխատանքի պտուղները, այլ նրա համար, որպեսզի միջոցներ գտնի թեթևացնելու նրա այժմյան տառապանքները և նրան օգնի հասնելու ավելի ապահովված կյանքի։

Ատոմային պատերազմը օրենքից դուրս հայտարարելը ոչ միայն անհրաժեշտ է, այլև հնարավոր։ Դրան կարելի է հասնել ռադիոակտիվ զենքի և ռադիոակտիվ թույների բոլոր տեսակներն արգելող միջազգային համաձայնության միջոցով։ Միջազգային տեսչության ու վերահսկողության սիստեմը պետք է և կարող է հաստատվել։

Ժողովուրդները պետք է կառավարություններից անհապաղ պահանջեն կնքել այնպիսի համաձայնագիր, որը արգելի մասսայական ոչնչացման զենքի բոլոր տեսակները։

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, Երևան, 1 և 3 ապրիլի 1954 թ.)